

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1928 N 622

Հ 370
N 1169

ԽԱՆԿՈ ԱՊԵՐ
ՀԱՅ. ՎԻՏ. ԹԱՎԱՐ

ՅՈՒՆԻ
ՄԻԿՈՒ

ՅԵԿ
ԿԿՈՒՏԵՐԸ

891.715

F - 62

Լուս և տեսնում ՀՍԽՀ. ԼԺԿ Սոցգանգլիխվարչության կիցզործող
Մանկական գրականության Հանձնաժողովի հավանությամբ

894 MAR 2013
R-62

- 2 -

2769



59796-66
Հովիվ Միկոն կաղնուտում կովերն եր արածացնում:
Կկուն, չալտիկ կկուն, թռավ-յեկավ, նստեց ծառի ձյուղին:
Միկոն ասում ե.

Նաշտուն կկու, իմաստունիկ, բախտագուշակ, ձայնդ անուշակ,
յերգիր, ասա, յես քանի տարի պիտի ապրեմ լույս աշխարհում:

Ասես կկուն համկացավ՝ իրենից ինչ են ուզում: Փոեց պոչը,
բացեց կտուցը, սկսեց կու-կու անել:

K
ԿԱ7453

- 3 -

30 MAY 2011

— կու, կու.
— ես մի տարի, — ճկութը խփելով հաշվում ե հովիվ Միկոն.
— կու, կու.
— ես յերկու տարի, խփում ե մատնամատը:
— կու, կու.
— ես յերեք տարի, խփում ե միջամատը:
Կու-կու արակ կկուն ու ել չխոսեց:
Հովիվ Միկոն վախեցավ.
— ես ինչ բան ե, միայն յերեք
տարի պիտի ապրեմ.
Ելի սկսեց հարցնել.
— Յերգիր, աղունիկս - ղունղու.
Նիկս, յես նորից կհաշվեմ,
Դու սխալվեցիր, չե. . .



— կու-կու, — արավ կկուն.
 — ես մեկ, հաշվեց Միկոն.
 — կու, կու,
 — ես յերկու,
 — կու, կու, արավ կկուն
 ու նորից լոեց.

Զարացավ Միկոն.

— Խաբում ես, չարագու-
 շակ սուտլիկ կկու, անպետք
 կկու: Յես չեմ ուզում՝ եղքան
 շուտ մեռնեմ:



Խլեց մարակը,
 կանդնեց ծառի տա-
 կը, վոնց ե թփփաց-
 նում-շփփացնում,
 տալիս ե ծառին,
 տալիս ե ճյուղին,
 ուզում ե տալ սպա-
 նել, վայր դցել կկուին:

Են ժամանակվանից սկսած,
 հենց վոր կկուները մտնում
 են կաղնուտ՝ հովիվ Միկոն
 փայտն ե խլում, կամ քարը:
 Շատ կկու սպանեց նա, շատ
 արյուն թափեց: Դրանից հե-
 տո կկուները կաղնուտ չեյին
 գալիս, վախում եյին:



Եղ ամառ կաղնուտում վորդ ընկավ,
 ենպես մեծ, մազոտ վորդեր, թիթեռներ,
 թրթուրներ, կծիկ-կծիկ, բուռ-բուռ:


Վորդերը կերան ծառերի բոլոր տերևնե-
 րը ե սողալով ցած յեկան ծառերի տակ:

Սողում են խոտերի վրայով ենպես սե-
 սկակնած:

Կովերը նրաց կձղակներով տրորում են,
 բայց չի լինում, նրանք հնձում են ու հնձում
 գետնի կանաչը: Վորտեղից ելանցնում են,
 առաջը կանաչ չի դիմանում. գետինը պլոկ-
 վում ե, շապկահան ե լինում:

Հովիվ Միկոն գլուխը կարցրել ե: Եսպես վոր գնա, տեղը բան
չի մնա, բանը բուրդ ե, կովերն անկեր կմնան, կաթ չեն տա: Ի՞նչ
անի փոքր երին: Հնձում են ու հնձում: Դրա դեմ վոչ մի հնարք
չունի, վոչ դեղ ու դարման:

Մանր թռչունները թողել-հեռացել են կաշնուտից:
Ժամանակ անցավ: Կկուներն ելի սկսեցին այցելության դար:
Հովիվ Միկոն իրենն առել ե. ել նրանց յետեից չի ընկնում:



Եղտեղ ելի մի նոր փորձանք:

Գետնի վրա ծեփ տված վորդն սկսեց մազը տալ, մազը թա-
փել: Ի՞նչ մազ. պուր, սուր՝ ասեղի ծայր, թեթև, թեթև: Քամին
խլում ե ու թացնում, յերկնքով մին անում: Ծառ ու տերե, կա-
նաչ ու խոտ մազի մեջ կորել են: Մազը լցվում ե կովերի բերան-
ները, քթածակերը, կանաչի հետ գնում մտնում ե կովերի աղիք-
ները: Մազից կովերը հազում են, աչքերը ճպուտում են, փորա-
ցավ են ընկնում: Հովիվ Միկոյի աշքերն ել կարմրել են, աչքերը
ջրակալում են: Յեվ յեզն ել դաշազգիւ, կատաղել ե, փնչահարում
ե, պոչտհարում ե:

Հովիվ Միկոն բոլորովին գլուխը կորցքեց, չի իմանում ուր
տանի նախիրը:





Բայց կաղնուտում բանը փոխվեց, որեցոր վորդը պակասեց,
ասես թե մի աներեսույթ ձեռք վորդերին հավաքեց:

Կովերն ելի արածում եյին կաղնուտում:

Ուրախացավ հովիվ Միկոն:

Դեսից դենից ելի հավաքվեցին կկուները կաղնուտի ծառերի
վրա:

Հովիվ Միկոն շուտ մեռնելու ահը սրտից չեր հանել: Մի որ
քարը վրա արագ ու մի կկու ծառից վեր դցեց:

Կկուն անշունչ ընկավ գետին բերնից վորդը կախ ընկած:
Հովիվ Միկոն առավ դանակը, կկվի փորը քացեց: Յեվ ինչ.



Են ել շատ, վոչ թե քիչ: Թոշնի փորում լիքը մազոտ վորդ:

Այդաեղ Միկոն իր աշքովը տեսավ, համոզվեց, վոր կաղնուտը
վորդերից մաքրողը—յեղել են կկուները. կկուները չինեյին, իր
կովերը սովամահ կլինեյին:

— Ե, — ասում ե հովիվ Միկոն, — շնորհակալություն ձեզ կկու-
ներ, յես ձեր դեմ մեղավոր եմ: Ել չեմ փախցնի ձեզ կաղնուտից:
Յեվ ել կկու չեր թոցնում:

Այն ամառվանից վոչ թե յերեք տարի, այլ 33 տարի անցավ,
ելի հովիկ Միկոն կենդանի յե, առողջ, մեռնել չի ուզում:



Կազմուտ են գալիս, նրա շուրջը հավաքվում թռնիկները
կկուներին խոսեցնելու համար և պապից լսում.

— Զլինի թե կկուներին վնաս տաք, մեր բարեկամներն են,
վնասակար վորդերին ոտում են. իսկ կկուի խոսելուն ուշ մի գարձ-
նեք. մեկ տասն է կանչում, մեկ հարյուր. մեկ ել տեսար կու-
կու—ու պրծավ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0386555

2769


Ա. Վ.

Պ. Ե.

Տ. Մ. Ա.

ԳԻՒՆ Ե 25 ԿՈՊ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍՏԻՎՈՒԹԵԱՆ
ԱՌԵԴՐԱՎԱՅՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԽԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԱ
ՀՀ



ԳՐԱՆԴ. № 488 Բ.

ՊԱՏՎԵՐ № 696.

ՏԻՐԱԳ 3000:

ՊԵՏԱԿԱՆ № 667.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԵՎԱՆ - 1928